ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2012-2017 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ-2018

«Հայաստանի ազգային ագրարային համալսարանի զարգացման 2012-2017 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման կատարողականի հաշվետվությունը հաստատվել է 2018 թ.-ի փետրվարի 16-ի գիտական խորհրդի նիստում (արձ. № 6):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 4
2. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 6
3. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ և ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 8
4. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ 10
5. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 12
6. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ 15
7. ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 18
8. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ 20
9. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ 21
10. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 25
11. ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 32
12. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 33
13. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ 35
14. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ 40

1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Նպատակը	Խնդիրները, գործողությունները	Ակնկալվող արդյունքը	Կատարողական
Աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող,ազգրարային ոլորտի մրցունակ ու բարձրորակ մասնագետներ պատրաստելու նպատակով՝ կրթական գործընթացների կազմակերպման ու կառավարման արդյունավետ մեխանիզմների ձևավորում ու կատա-ռելագործում և կրթական գործընթացների արդիականացում	1. Կրթական գործունեության զարգացման գիտականորեն հիմնավորված հայեցակարգի մշակում և հաստատում	Համալսարանի գիտ.խորհրդի կողմից հաստատված հայեցակարգ	Մշակվել, հաստատվել և ներդրվել է համալսարանի զարգացման հայեցակարգը և ռազմավարական պլանը:
	2. Աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան նոր մասնագիտությունների ու մասնագիտացումների վերակառուցման ճկուն համակարգի ստեղծում	Համալսարանի գիտ. խորհրդի կողմից հաստատված նոր կրթական ծրագրերի հաստատման, մշակման, վերանայման և մոնիթորինգի քաղաքականությունները ընթացակարգեր և աշխատակարգեր	Մշակվել, հաստատվել և ներդրվել են ՄԿԾ –երի մշակմանը, մշտադի-տարկմանը և վերանայմանը ուղղված քաղաքականություններ և ընթացակարգեր: Վերանայվել են բոլոր մասնագիտությունների գծով ուսումնական պլանները՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները
	3. Ուսուցման մեթոդների օպտիմալացում, ուսուցման գործընթացներում դասախոսների աշխատանքի արտադրողականությունը և ուսումնական գործունեության կազմակերպման արդյունա-վետությունը բարձրացնող նոր կրթական տեխնոլոգիաների ներդրում	Համալսարանի բոլոր մասնագիտությունների 50 % -ի գծով նոր կրթական տեխնոլոգիաներով ուսուցման կազմակերպում	Համալսարանում ներդրվել են նոր կրթական տեխնոլոգիաներով դասավանդվող մուլտիմեդիոն մի շարք լսարանաներ, սակայն դրանց ավելացնելու և նաև արդիականացնելու անհրաժեշտություն կա:

	4. Ագրարային ոլորտի ժամանակակից պահանջները բավարարող և դրանց փոփոխությունները հաշվի առնող կրթական ծրագրերի մշակում և ներդրում	Ագրարային ոլորտի կազմակերպությունների կողմից հավանության արժանացած և համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված նոր կրթական ծրագրեր	Մշակվել և հաստատվել է գյուղատնտեսության ոլորտի ՈՍՇ –ը Սելեկցիա և գենետիկա մասնագիտության համար մշակվել է կրթական վերջնարդյունքները,վերանայվել և հաստատվել են բոլոր մասնագիտությունների գծով ուսումնական պլանները:
	5. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի և ինքնակրթության դերի բարձրացմանը միտված՝ ուսումնական գործընթացների աստիճանական վերակառուցում	Ուսանողների ինքնուրույն աշխատանքի տեսակարար կշռի ավելացում 50% - ով, ուսումնական գործընթացում ուսանողների ինքնակրթության գնահատման չափանիշների մշակում և ներդրում	Բոլոր մասնագիտությունների ուսումնական պլաններում ավելացված են ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարմանը ուղղված տոկոսաբաժինը:
	6. Համալսարանի կրթական տարածքի ընդլայնում, դեպի շրջանները կրթական ծառայությունների մատուցման տեղաշարժումը	Ուսումնական պարապմունքների 20 %-անցկացում գյուղական համայնքներում, արտադրական ձեռնարկություններում, ֆերմերային և գյուղացիական տնտեսություններում, կոոպերատիվներում	Ագրոնոմիական, անասնաբուժա-կան և պարենամթերքի տեխնոլո-գիաների կրթաբլոկներում իրակա-նացվող մասնագիտական առար-կաներից 10-ը իրականացվում է համալսարանի տնտեսությունն-ներում: Սակայն տվյալ ուղղությամբ համալսարանը անելիքներ ունի ապագայում:
	7. Հեռավար ուսուցման համակարգի ստեղծում և կատարելագործում	Ստեփանակերտի, Սիսիանի և Վանաձորի մասնաճյուղերում համացանցով դասախոսությունների կազմակերպում և մատուցում	Համալսարանի կողմից կիրառվում են համապատասխան և՛, տեխնիկական և՛ հեռա-հաղորդակցման միջոցներ համալսարանի մասնաճյուղերի հեռավար ուսուցման կազմակերպ-ման համար:

2. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Նպատակը	Խնդիրները, գործողությունները	Ակնկալվող արդյունքը	Կատարողական
Համալսարանի ընդունելության համակարգի կատարելագործում, ուսանողական համակազմի համակարգի ընդլայնումով՝ դիմորդների կայուն հոսքի ապահովում	1. Ուսումնական ստորաբաժանումների, ուսանողական կառույցների, հիմնական գործատուների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ընդգրկումով՝ համալսարանի գովազդարշավի ընդլայնում և ակտիվացում 2. „Բաց դռների օրեր" -ի համալսարան ճանաչողական այցերի, օլիպմիադաների անցկացման և այլ միջոցառումների միջոցով ավագ դպրոցների աշակերտների հետ տարվող աշխատանքների ընդլայնում	Մասնագիտական կողմնորոշմամբ Համալսարան ընդունվող գյուղաբնակ դիմորդների 80-90% կայուն կազմի ապահովում Մարզերից և տարածաշրջաններից ըստ մասնագիտությունների և մասնագիտացումների դիմորդների քանակի ավելացում 30 – 40%-ով	Մասնագիտական կողմնորոշմամբ Համալսարան ընդունվող գյուղաբնակ դիմորդների թվաքանակի ավելացման և կայուն կազմի ապահովման նպատակով ՀԱԱՀ-ի կողմից յուրաքանչյուր ուս. տարի պլանավորվում և իրականացվում են մասնագիտական կողմնորոշման լայնածավալ աշխատանքներ ՀՀ բոլոր մարզերում: Համալսարանի ղեկավար կազմը յուրաքանչյուր տարի կազմակերպել է ճանաչողական այցեր ՀՀ մարզերի տարբեր դպրոցների աշակերտների համար, որի ժամանակ նրանց ծանոթացնում են համալսարանի կրթական ծառայություններին և ապագա մասնագետ դառնալու հնարավորություններին: Վերջին տարիներին մասնագիտական կողմնորոշմամբ Համալսարան ընդունվող գյուղաբնակ դի-

			մորդների կազմը եղել է ընդհա-նուրի նկատմամբ 50 %: Վերջին տարում մասնագիտական կողմնորոշմամբ Համալսարան ընդունվող գյուղաբնակ դիմորդների կազմը ընդհանուրի նկատմամբ չի աճել, ինչը առավելապես պայմանավորված է արտաքին գործոններով:
	3.Դեպի համալսարան մուտքը դյուրացնող միջոցառումների նախատեսում, դիմորդների համար նախապատրաստական դասընթացների կազմակերպում: Ավագ դպրոցների և վարժարանների հետ համատեղ կրթական գործունեու-թյան իրականացման երկարաժամկետ համաձայնագրերի կնքում, հենակե-տային դասարանների ստեղծում և հա-մալսարանի ֆակուլտետների հետ դրանց կապի ակտիվացում	Գյուղաբնակ պատանիներին ագրոպարենային ոլորտում կրթություն ստանալու մասնա-գիտական կողմնորոշման աջակցություն և գյուղական համայնքներում մասնագիտական կողմնորոշման պատանեկան ակումբների առայություն	Համալսարանը իր առջև խնդիր է դրել աջակցել գյուղաբնակ պատանիներին մասնագիտական կողմնորոշմամբ՝ ագրոպարենային ոլորտում կրթություն ստանալու նպատակով: Համալսարանը յուրաքանչյուր տարի պլանավորում և իրականացնում է այցելություններ ՀՀ տարբեր մարզեր մասնագիտական կողմնորոշման լայնածավալ աշխատանքներ՝ ներգրավելով տվյալ գործում ՀՀ մարզպետարանները և գյուղապետարանները:

3. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ և ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Նպատակը	Խնդիրները, գործողությունները	Ակնկալվող արդյունքը	Կատարողական
Համալսարանում ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի ներդրման մեխանիզմների կատարելագործում և հետագա զարգացում	1. Համալսարանի բոլոր կրթական ծրագրերում (միջին մասնագիտական, մագիստրոսական, հետազոտողի կրթական ծրագիր) կրեդիտային համակարգի ներդրում	Կրեդիտային համակարգով միջին մասնագիտական, մագիստրոսական, հետազոտողի կրթակամ ծրագրերի կազմակերպում	Համալսարանում բոլոր կրթական ծրագրերի համար (ըստ կրթական աստիճանների)փուլային սկզբունքով իրականացվել է կրեդիտային համակարգի ներդրումը, որը պարբերաբար ենթարկվում է մշտադիտարկման:
	2. Մոդուլային սկզբունքով և կրեդիտային հենքով մասնագիտ.ուս. պլանների և առարկայական ծրագրերի մշակման, վերանայման և մոնիթորինգի իրականացման մեխանիզմների կատարելագործում: Կրեդիտային համակարգի ներդրմանը համահունչ կրթական ծրագրերի բովանդակային փոփոխությունների իրակացում	Մշակված մեխանիզմների հաստատում և ուսումնական գործընթացներում մշակված և ներդրված մեխանիզմներ	Մշակված և ներդրված են առարկայական ծրագրերի մշակման մեթոդաբանությունը, կրթական ծրագրերի իրականացման մշտադիտարկման մեխանիզմները:

	3. Ուսանողների գիտելիքների բազմագործոն գնահատման համակարգի հետագա կատարելագործում և զարգացում	Ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային կատարելագործված համակարգ:	Ուսանողների գիտելիքների բազմագործոն գնահատման համակարգի հիման վրա համալսարանի տնտեսա-գիտության և ագրոբիզնեսի շուկայաբանության ֆակուլտետների մասնագիտությունների համար իրականացվել է գիտելիքների բազմագործոն գնահատման համակարգի վերանայում՝ ըստ գործոնների կարևորության:
	4. Կրեդիտային համակարգով ուսուցման կազմակերպման խորհրդատու (խնամակալ) դասախոսների ինստիտուտի ստեղծում և կատարելագործում: Կրեդիտային համակարգի կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով „Էլետրոնային դեկանատի"ստեղծում	Դեկանատներում կրեդիտային համակարգով ուսուցման խորհրդատուի համակարգի ստեղծում , ֆակուլտետներին կից „Էլեկտրոնային դեկանատների„ ստեղծում	Համալսարանի բոլոր ֆակուլտետներում գործում են մասնագիտությունների համակարգողներ, որոնք իրենց աշխատանքները կազմակերպում են ֆակուլտետեի գիտ.խորհրդի կողմից հաստատված պլան – գրաֆիկով:

4. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Նպատակը	Խնդիրները, գործողությունները	Ակնկալվող արդյունքը	Կատարողական
Որակի ապահովման համալսարանական համակարգի մշակում, ներդրում և հետագա զարգացում	1. Համալսարանի որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի և ռազմավարության մշակում և հաստատում, որակի ապահովման համալսարանական մոդելի ընտրություն և կազմակերպման կառուցվածքի ձևավորում	Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված կրթության որակի ապահովման քաղաքականություն, ընթացակարգեր և ռազմավարություն	Ուսումնամեթոդական կենտրոնի ԿԲՌՊ ՆՏ բաժնի կողմից մշակվել և ներդրվել են որակի ներքին ապահովման ձեռնարկը , որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը:
	2.Որակի ապահովման համալսարանական համակարգի, մասնաճյուղերի և ֆակուլտետային ենթահամակարգերի ձևավորում, հիմնական գործառույթների իրականացման հստակ կանոնների և ընթացակարգերի սահմանում	Որակի ապահովման համալսարանական կայուն համակարգ, որակի ապահովման գործընթացների արդյունավետ կառավարման համակարգ	Համալսարանում ձևավորվել և գործում է որակի ապահովման համակարգ, որը ներառում է որակի ապահովման մասնագտացված կառույցը, որակի ապահովման պատասխանատուներին՝ ըստ բաժանումների և այլ շահակից կողմերի (ուսանողներ, շրջանավարտներ, գործատուներ): Հստակ սահմանված և փաստաթղթավորված են որակի ապահովման համա-կարգում ներգրաված շահակից կողմերի գործառույթները:

	3.Համալսարանական հանրության շրջանում որակի ապահովման համալսարանական համակարգի ռազմավարության վերաբերյալ իրազեկում և ներբուհական համընդհանուր հավանության ձեռքերում, համակարգի գործարկում, ներքին և արտաքին աուդիտների պարբերական իրականացում	Համալսարանական հանրության ամբողջական իրազեկվածության հաստատում, գործարկված համակարգի գնահատված արդյունքներ	Համալսարանի ներքին շահակիցները տեղեկացված են համալսարանի ռազմավարության վերաբերյալ, իսկ արտաքին շահակիցներին տեղեկատվության տրամադրման համար համալսարանի կայքում տեղադրված է ՀԱԱՀ ռազմավարական ծրագիրը և համապատասխան հաշվետվությունները
	4. ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին համաձայն՝ համալսարանի փորձնական ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) հավատարմագրման գործընթացի կազմակերպում և իրականացում	Համալսարանի հավատարմագրված կարգավիճակ	Համալսարանի կողմից 2012 թ-ին իրականացվել է համալսարանի գործնեության ինքնագնահատում և ինքնավերլուծություն: Համալսարանը անցել է արտաքին գնահատման գործընթաց, որի արդյունքնում ստացել է հավաստագիր 2015 թ-ի մարտի 21-ի հավատարմարգրման հանձնաժողովի որոշմամբ:

5. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Նպատակը	Խնդիրները, գործողությունները	Ակնկալվող արդյունքը	Կատարողական
Համալսարանի կրթական ծրագրերի ու շնորհվող որակավորումների հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման պաշտպանական մեխանիզմների մշակում ու հաստատում	1. Մասնագիտությունների կրթական ծրագրերի նկարագրերի սահմանում, պլանավորում, մշակում և հաստատում	Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված կրթական ծրագրերի նկարագիր	2012թ. օգոստոսի 31- ին գիտ. խորհրդի № 1 արձանագրությունով հաստատված է կրթական ծրագրերի ստեղծման հայտի ձևաթերթը (ԿԾ-ի մշակման կառուցվածքը)
	2. Համալսարանում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականության և ընթացակարգերի մշակում ու հաստատում	Կրթական ծրագրերի մշտադիտարկման, դրանց բարելավման հաստատված քաղաքականություն և ընթացակարգ	Մշակվել և հաստատվել է ՄԿԾ – երի պարբերաբար վերանայման և գնահատման քաղաքականությունը, վերանայման ընթացակարգը, գնահատման կարգը

	3. Մասնագիտությունների կրթական ծրագրերի մոնիթորինգի պարբերական իրականացում,գնահատում, վերանայում, մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսանողների և շրջանավարտների բավարարվածության ուսումնասիրում	Կրթական ծրագրերի համալիր գնահատման համակարգի առկայություն	Henger ծրագրի շրջանակներում պարբերաբար իրականացվում են հարցումներ շրջանավարտների շրջանում կրթության որակի և ԿԾ-երի բաղադրիչների վերաբերյալ: Համալսարանում պարբերաբար իրականացվում են նաև դասընթացների որակի գնահատում ուսանողների կողմից , ինչպես նաև ներքին աուդիտորների կողմից:
	4. Մասնագիտությունների կրթական ծրագրերի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչամարքինգի) իրականացում	Կրթական ծրագրերի կառուցման գործում ներդրված բենչմարքինգի արդյունավետ համակարգ	Մշակված և հաստատված է բենչմարքինգի քաղաքականությունը և ընթացակարգը
	5. Մասնագիտությունների կրթական ծրագրերից և դրանց ելքային արդյունքներից գործատուների պահանջմունքների ուսումնասիրություն	Գործատուների բավարարվածության գնահատված արդյունքներ, հետադարձ կապի մեխանիզմների առկայություն	Համալսարանի գործատուները ներգրաված են պետական քննությունների և ավարտական հանձնաժողովներում ավարտական պաշտպանություններին, որի արդյունքում ներկայացվել են հաշվետվություններ, որտեղ նշվում են թերությունները և առաջարկությունները, որոնք հաշվի են առնվել մասնագիտությունների նոր ուսումնական պլանները կազմելիս

	6. Ագրարային կրթության միասնական դաշտում ընդհանուր որակավորում շնորհելու նպատակով ԱՊՀ երկրների ագրարային համալսարանների ասոցիացիայում ոլորտի մասնագիտությունների կրթական ծրագրերի առավելագույն համապատասխանեցում, կրթական ծրագրերի արդիականության վերլուծության համակարգի ստեղծում և ներդրում	Միջազգային չափանիշներին առավելագույն չափով համապատասխանեցված կրթական ծրագրերի առկայություն, կրթական ծրագրերի արդիականության վերլուծության արդյունավետ համակարգի առկայություն	Արտասահմանյան ուսումնասիրության փորձի հիման վրա համալսարանի կողմից մշակվել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման ձևաչափ: Դրա հիման վրա մշակվել են համալսարանի վերջնարդյունքների վրա հիմնված 30 մասնագիտությունների կրթական ծրագրերը:
	7. Ագրարային մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման գործընթացներում միջազգային և միջբուհական համագործակցության ընդլայնում, գիտակրթական ծրագրերի մեթոդական մշակումների, մանկավա-րժական կադրերի պատրաստում և փոխանակման ոլորտների ընդարձակում ու կատարելագործում	Ամբիոններում գիտակրթական ծրագրերի ապահովման հիման վրա մանկավարժական կադրերի 25-30% - ի փոխանակում, մեթոդական մշակումների հրատարակում	Մեթոդական մշակումների հրատարակումը կրում է պարբերական բնույթ, իրականացվում է մեթոդականների վերանայում և վերամշակում:

6. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Նպատակը	Խնդիրները, գործողությունները	Ակնկալվող արդյունքը	Կատարողական
Համալսարանի կրթական համակարգում ուսանողակենտրոն ուսուցման համակարգի և սկզբունքների մշակում ու ներդնում	1.Ուսանողակենտրոն ուսուցման, կրթական վերջնարդյունքների հենքով կրթական ծրագրերի կազմակերպման նպատակով ուսանողների կարիքների պարբերական գնահատման իրականացում	Ուսանողների կարիքների գնահատման հաստատված համակարգի առկայություն	Մշակվել է և 09.02.15թ. արձանագրություն № 9 որոշմամբ հաստատվել է և գործածության մեջ է դրվել շահակիցների գնահատման կարգը:Վեր են հանվում ուսանողների, դասախոսների և շրջանավարտների կրթական կարիքները և արդյունքները ներկայացվում են հաշվետվությունում:
	2. Ուսանողակենտրոն ուսուցմամբ կրթության կազմակերպման, դասախոսական կազմի վերապատրաստման մեթոդական հենքի ստեղծում	Համալսարանի "ուսանողակենտրոն" ուսուցմամբ կրթության կազմակերպում	Համալսարանում իրականացվել են սեմինարներ արտասահմանյան փորձագետների կողմից ուսուցման ժամանակակից մեթոդներով դասավանդման թեմաներով, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցման տարրերի կիրառման համար ուսումնական գործընթացում

	3.Մասնագիտությունների կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման, դասախոսների աշխատանքի գնահատման գործընթացներին ուսանողների մասնակցության ապահովում, մասնագիտությունների կրթական ծրագրերից, դասախոսական և վարչական կազմի աշխատանքից, ուսումնական ռեսուրսներից ու օժանդակ ծառայություններից ուսանողների բավարարվածության ուսումնասիրման և կարիքների վերհանման նպատակով համալսարանական միասնական համակարգի մշակում և ներդրում	Կրթության կազմակերպման և արդյունքների գնահատման գործընթացներում ուսանողության մասնակցության 50% -ի ապահովում	Համալսարանում պարբերաբար գնահատվում են ԿԾ –երի բաղադրիչ մասերը, գնահատման գործընթացում ներգրաված են ուսանողները (բոլոր մասնագիտությունների ուսանողության 65 % -ից ավելին) :
	4. Ուսանողների կարիքների վերհանման քաղաքականության և ընթացակարգերի մշակում և հաստատում, լրացուցիչ պարապմունքների կազմակերպում և խորհրդատվությունների տրամադրում	Համալսարանի կողմից հաստատված ուսանողների կարիքների բացահայտման համակարգի առկայություն	Համալսարանի կողմից մշակված և 01.07.13թ արձ. № 14 որոշումով գիտ. խորհրդով հաստատված է ուսանողների կարիքների վերհանման քաղաքականությունը և ընթացակարգերը:
	5. Ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգի և ժամանակացույցի մշակում և հաստատում	Հաստատված կանոնակարգ և ժամանակացույց	Համալսարանի ամբիոներում պարբերաբար կազմակերպվում են լրացուցիչ խորհրդատվություններ: 2016թ. ուսումնասիրվել է լրացուցիչ պարապմունքների անցկացման արդյունավետությունները:

	6.Ուսանողների կարիերայի զարգացման նպատակով խորհրդատվականի ծառայությունների համակարգի ստեղծում և կատարելագործում	Ուսանողների կարիերայի զարգացման արդյունավետ համակարգ	Համալասարանում գործում է ուսանողների աշխատանքի տեղավորման կարիերայի կենտրոնը, որը զբաղվում է ուսանողների աշխատանքի տեղավորման խորհրդատվական գործընթացով:
	7. Ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի աշխատանքների ակտիվացում և դերի բարձրացում	Ուսանողների իրավունքների պաշտպանության պատասխանատու մարմնի առկայության, պաշտպանվածության, ապահովվածության բարձր մակարդակ	Համալսարանում որպես ուսանողների իրավունքների պաշտպանության պատասխանատու մարմին հանդիսանում է Ուսանողական խորհուրդը:

7. ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Նպատակը	Խնդիրները, գործողությունները	Ակնկալվող արդյունքը	Կատարողական
Կրթության արդիա-կանացման և համալսարանի մրցունակության բարձրացման նպատակով՝ համալսարանի կադրային քաղաքականության շարունակական կատարելագործում, կադրային ներուժի զարգացումը և դասավանդման գործընթացներում որակյալ և կարող դասախոսական կազմի ներգրավում	1. Պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի կադրերի ընտրության, պաշտոնակալման և աշխատանքից հեռացման քաղաքականության և ընթացակարգերի կազմում և աշխատանքից հեռացման քաղաքականության և ընթացակարգերի մշակում ու հաստատում	Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր	03.06.2016թ. մշակվել և գիտ.խորհրդի արձ. № 10ի որոշմամբ հաստատվել է և գործածության մեջ է դրվել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և ազատման քաղաքականությունը և ընթացակարգը
	2. Դասախոսական կադրերի մրցույթային կարգով ընտրության, համալսարանը երիտասարդ դասախոսներով համալրելու նպատակով ստաժոր-դասախոսի պատրաստման, երիտասարդ գիտնականներին և դասախոսներին օգնության հատուկ ծրագրերի մշակման և իրականացման, համալսարանում երիտասարդ կադրերի ամրագրման, լրացուցիչ վարձատրության համակարգի մշակում, կատարելագործում, ընդլայնում	Համալսարանում կադրային կայուն քաղաքականության, սոցիալական պաշտպանվածության մշակված և ներդրված քաղաքականություն	Մշակվել և հաստատվել է պրոֆեսորադասախոսական կազմը երիտասարդ կադրերով համալրման քաղաքականությունը:

	3. Դասախոսական կազմի գործունեության գնահատում, քաղաքականության, մեխանիզմների ու գործիքների մշակում և ներդրում, ընթացակարգերի և չափորոշիչների հատուկ սահմանում և հրապարակում, գնահատման անհատական (ինքնագնահատման, գնահատում ղեկավարի կողմից) և կոլեկտիվ (գնահատում ուսանողների և գործընթացների կողմից)եղանակների կիրառում	Դասախոսական կազմի խոցելիության և ռիսկայնության նվազեցում և գործունեության նպատակասլաց բարելավման հաստատված գործընթացներ	Համալսարանում իրականացվում է ուսանողների կողմից դասախոսների կողմից գնահատում ‹‹Դասախոսը ուսանողի աչքերով››, որը նպաստում է բացահայտել տվյալ դասախոսի թույլ և ուժեղ կողմերը: Մշակվել և հաստատվել է Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման ընթացակարգը:
	4. Պրոֆ. դասախոսական կազմի որակավորման բարձրացման և կատարելագործման համակարգի ստեղծում և զարգացում, դասախոսական, վարչ. և ուսումնաօժանդակ կազմի որակավորման բարձրացման և կատարելագործման հեռանկարային պլանի կազմում և հաստատում, մասնագիտական ունակությունների ու կարողությունների զարգացման և ակադեմիական մակարդակի բարձրացման պայմանների ապահովում	Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական ունակությունների ու կարողությունների հզորացման համակարգի առկայություն	Մշակվել և հաստատվել է պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգը, և համալսարանի ակադեմիական աշխատակազմի ներգրավման և կայունության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգը:

8. ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ

Նպատակը	Խնդիրները, գործողությունները	Ակնկալվող արդյունքը	Իրականացման ժամկետները	Կատարողական
Համալսարանում կրթական և գիտահետազոտական գործընթացների կապի ապահովում,մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերում հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացում	1.Մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերում գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներդրմանն ուղղված ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի վերանայում	Վերանայված մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրեր, ուսումնական պլաններ և առարկայական ծրագրեր	2014թ.	2016-2017 ուստարվանից երկու տարի տևողությամբ մագիստրատուրայի ուսուցումը դարձել է մեկ տարի, որից ելնելով վերանայվել և մշակվել են մագիստրատուրայի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը:
	2. Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն,ուղղված քաղաքականության, ընթացակարգերի և մեթոդների մշակում և հաստատում և իրականացում	Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցման արդյունքների գնահատման հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր	2013-2016թթ.	08.06.2016թ. արձ.№ 10 որոշմամբ մշակվել և հաստատվել է Գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման քաղաքականությունը և ընթացակարգը, որը ներդրվել է գործածության մեջ:

9. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Նպատակը	Խնդիրները, գործողությունները	Ակնկալվող արդյունքը	Կատարողական
Հիմնարար հետա-զոտությունների ոլորտների ընդլայնմանը և կիրառական գիտական ուսումնասիրությունների ու փորձարարական-կոնստրուկտորական մշակումների ապահովմանը ուղղված՝ համալսարանի գիտահետազոտական-ինովացիոն գործունեության արդյունավետության բարձրացում, գիտա-հետազոտական գործունեության միջա-զգայնացում, գիտական հետազոտությունների արդյունքների ապրանքայնացում և գիտության, կրթության ու արտադրության կապի ամրապնդում	1. Գիտական համակարգի կարողությունների իրականացումն ու զարգացումն ապահովող ենթակառուցվածքների և դրանց գործունեության ծրագրային հիմքի ապահովում, գիտության և առաջատար տեխնոլոգիաների զարգացումն ապահովող ենթակառուցվածքների ձևավորում , ազգարային քաղաքականության և տնտ. հետազոտությունների կենտրոն, գիտական նոր պրոբլեմային լաբորատորիաների, գիտական կենտրոններում և գիտա-հետազոտական ինստիտուներում նոր բաժինների ստեղծում	Գիտահետազոտական գործունեության իրականացման համակարգի, անհրաժեշտ ենթակառուցվածքների և ծրագրային հիմքի առկայություն	2012 թ.-ին համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ ՀԱԱՀ-ի գիտական կենտրոնը վերաձևավորվել է և կազմավորվել է գիտության դեպարտամենտը իր ենթակառուցվածքով (https://www.anau.am/images/stories/Git.jpg):

	2.Որակյալ հետազոտությունների իրականցման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու մեխանիզմների մշակում	Գիտական խորհրդում հաստատված մեխանիզմների և ընթացակարգերի առկայություն	2012 թ.-ին ՀԱԱՀ-ի կազմում որպես կառուցվածքային ստորաբաժանումներ ընդգրկվել են Ագրոտեխնոլոգիայի, Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի, Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոնները: 2013 թ.-ին ՀԱԱՀ-ի կազմում ստեղծվել է Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտության կենտրոնը: ՀԱԱՀ գիտության դեպարտամենտի կողմից մշակվել է և համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատվել է «Հետազոտությունների իրականացումն ու զարգացումն ապահովող քաղաքականությունը», որը ներառում է որակյալ հետազոտությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու մեխանիզմները, ինչպես նաև գիտական հետազոտությունների բյուջեի բաշխումը: ՀԱԱՀ-ի Գիտության դեպարտամենտի կողմից կնքնվել են պայմանագրեր և հուշագրեր Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի, Վրաստանի, Ղազախստանի, Գերմանիայի և այլ
	3. Գիտական հետազոտությունների բյուջեի բաշխման քաղաքականության ընթացակարգի մշակում	ՀԱԱՀ – ի գիտական խորհրդում հաստատված ընթացակարգեր	
	4. Համալսարանում իրականացվող գիտության գերակա ուղղությունների հաստատման և լրամշակման ընթացակարգի մշակում	ՀԱԱՀ – ի գիտական խորհրդում հաստատված ընթացակարգեր	
	5. Հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմների մշակում	ՀԱԱՀ –ի գիտական խորհրդում վավերացման մեխանիզմների հաստատման մասին որոշման ընդունում	
	6. Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների մշակում: Գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ընթացակարգի մշակում	Համալսարանի գիտական ընթացակարգի վերաբերյալ որոշման ուսումնական գործընթացի փոխկապակցման ընթացակարգի մշակում	
	7. Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման քաղաքականության իրականացում	Համալսարանի գիտական ընթացակարգի վերաբերյալ որոշման ընդունում	

	8. Գիտության և կրթության ոլորտների բնականոն սերնդափոխության իրականուցում, բարձր որակավորում ունեցող երիտասարդ կադրերի ապահովում: Երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու ընթացակարգի մշակում և քաղաքականության իրականացում	Համալսարանի գիտական խորհրդում հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր	երկրների գիտակրթական կառույցների հետ: 2014 թ.-ին ՀԱԱՀ-ում Բույսերի կենսատեխնոլոգիայի եւ աէրոպոնիկայի լաբորատորիա է բացվել: Վերջին տարիներին ՀԱԱՀ-ի գիտության դեպարտամենտը ստեղծված պայմանագրերի և հուշագրերի հիման վրա սերտորեն համագործակցում է ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի, Վրաստանի, Ղազախստանի, Գերմանիայի և այլ երկրների գիտակրթական կառույցների հետ: 2015 թ.-ին ստեղծվել է Կենսաբանական հետազոտությունների լաբորատորիան, որը հագեցված է ժամանակակից հետազոտական սարքավորումներով: Մշակվել և համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատվել է «Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման հաստատված քաղաքականությունը և ընթացակարգը», որը հիմք է ծառայում գիտության և կրթության միջև սերտ կապ ստեղծելու և գիտական նվաճումների ուսումնական գործընթաց ներդրելու համար:
	9. Հետբուհական կրթության ծրագրերի արդիականացում	Նորացված ծրագրերի առկայություն	
	10. Միջազգային գիտակրթական կառույցներում երիտասարդ մասնագետների պատրաստման մեխանիզմների մշակում	Համալսարանի գիտական խորհրդում հաստատված մեխանիզմների առկայություն	
	11.Գիտական ենթակառուցվածքների նյութատեխնիկական բազայի զարգացում,եզակի հետազոտական սարքավորումներով, տարբեր մասնագետների համատեղ օգտագործման համար նոր հետազոտական լաբորատորիաների ստեղծում	Նորաբաց լաբորատորիաների առկայություն	
	12. Գիտության ոլորտի նյութատեխնիկական բազայի արդիականացման մեխանիզմների մշակում, իրականցում	Մշակված մեխանիզմներ, լաբորատորիաներում նոր սարքավորումների առկայություն	
	13. Գիտության և արտադրության կապի ամրապնդում, գյուղ. Արտադրությունում հետազոտական արդյունքների ներդրման	Մշակված մեխանիզմներ, կատարված աշխատանքների ներդրման ակտեր	

	մեխանիզմների մշակում , իրականացում		2016 թ.-ին մշակվել և գյուղատնտեսության արտադրության է ներկայացվել գիտական ներդրումային 6 ծրագիր, իսկ 2017 թ.-ին մշակվել և գյուղատնտեսության արտադրության է ներկայացվել 10 ծրագիր:
	15. Արտադրությունից հետազոտական պատվերների ձևավորման մեխանիզմների մշակում	Համալսարանի գիտական խորհրդում մշակված մեխանիզմների վերաբերյալ որոշման ընդունում	
	16. Հետազոտական գործունեության միջազգայնացում , միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսանողների և դասախոսների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգերի մշակում	Համալսարանի գիտական խորհրդում հաստատված կանոնակարգ	
	17. Օտարերկրյա գրախոսող ամսագրերում հրապարակումների կարգավորման մեխանիզմների մշակում	Համալսարանի գիտական խորհրդում հաստատված մեխանիզմների	
	18. Միջազգային գիտաժողովներին, սիմպոզիումներին դասախոսների և ուսանողների մասնակցությունը խրախուսող մեխանիզմների մշակում	Համալսարանի գիտական խորհրդում հաստատված մեխանիզմներ, մասնակցության հրավերքներ	
	19. Գիտահետազոտական արդյունքի ապրանքայնացման ապահովում, գյուղատնտեսական կիրառական հետազոտությունների ապրանքայնացման մեխանիզմների մշակում և իրականացում	Համալսարանի գիտ. խորհրդի կողմից հաստատված մեխանիզմներ	

10. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Նպատակը	Խնդիրները, Գործողությունները	Ակնկալվող արդյունքը	Կատարողական
